ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435 136,
էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

###
#
19.10.2016թ.
303-ի 2

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային
կոմբինատ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
պարոն Մհեր Պոլոսկովին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Պոլոսկով,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Քանի՞ աշխատակից ունի կոմբինատը 2016-ի հոկտեմբերի դրությամբ:
2. Քանի՞ նոր աշխատակից է ընդունվել և քանի՞սն են աշխատանքից ազատվել 2015թ.-ի հունվարի 1-ից մինչև 2016թ.-ի հոկտեմբերը:
3. Որքա՞ն է կազմում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատակցի միջին աշխատավարձը, որքա՞ն է տնօրենի աշխատավարձը:
4. 2015-16թթ. քանի՞ վթար է տեղի ունեցել, ի՞նչ ռիսկեր են պարունակել:
5. Աշխատանքային խեղում ստացածների համար ի՞նչ սոցիալական փաթեթներ են գործում:
6. Ի՞նչ աշխատանքներ են այս պահին տարվում «Լեռեքս»-ի շահագործման ուղղությամբ:
7. Քանի՞ պոչամբար է ռեկուլտիվացվել, ի՞նչ չափանիշներով է կատարվում ռեկուլտիվացիան:
8. Ամսական միջինը որքա՞ն հանքանյութ է արտահանվում:
9. Թափոնների միջին քանակը որքա՞ն է կազմում (ամսական, եռամսյակային կամ տարեկան՝ ըստ ձեր հարմարության):
10. Նախկին մսի կոմբինատի տարածքում ի՞նչ է նախատեսվում կառուցել, եթե շենքեր, ապա Քաջարանի բնակչության քանի՞ տոկոսն է նախատեսվում տեղափոխել այնտեղ:
11. Արծվանիկ համայնքում գործող պոչամբարը ի՞նչ վիճակում է այժմ:
12. Բնապահպանական ի՞նչ ծրագրեր են իրականացվում կոմբինատի կողմից

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան